ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 61/3295 «29» 09 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով
գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրի համաձայն, կից ներկայացվող պայմանագրի նախագիծի N1 հավելվածում նշված ապրանքները:

Տեղեկացնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեով, N 321 սենյակ, Վ.Մեժունցին, մինչև 2014թ. հոկտեմբերի 9-ը, ժամը 11:30-ը: Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հայտերը կբացվեն Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեով, N 321 սենյակում, 2014թ. հոկտեմբերի 9-ին, ժամը 11:30-ին:

Հայտը ներառում է գնային առաջարկը և մասնակցի գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի փոփոխված հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում «Շրջանակային համաձայնագրեր» բաժնի «Հրավերներում կատարված փոփոխություններ» ենթաբաժնում):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-14/240»:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ **Ռ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

Կատարող՝ Վ.Մեժունց
հեռ. 514-194

Հավելված_**1**
«ԵՔ-ՇՀԱՊՁԲ-14/240» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ

----------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
Երևանի քաղաքապետարանի կողմից N «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-14/240» ծածկագրով հայտարարված ընթացակարգի ----------չափաբաժնին (չափաբաժիններին)
չափաբաժնի (չափաբաժինների) համարը
և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:
----------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝
1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

----------ն հայտնում և հավաստում է, որ չունի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

--- ---
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

_____2014 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված-2
«ԵՔ-ՇՀԱՊՁԲ-14/240» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N **«ԵՔ-ՇՀԱՊՁԲ-14/240»** ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ...-ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
համաձայն հետևյալ գների՝

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
...	…			
56				

***3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:**
****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

_____ _____ Մասնակցի
անվանումը ¥անունը¤ (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը¤ (ստորագրությունը¤

Կ. Տ.

_____2014 թ.
¥ամսաթիվը, ամիսը¤

Նախագիծ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԵՔ- ՇՀԱՊՁԲ - 14/240

ք. Երևան << >> << >> 2014թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ՝ Ռ. Թադևոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 2011թ. ապրիլի 7-ի N1211-Ա որոշման հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «_____» -ն, ի դեմս տնօրեն _____յանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **սննդամթերքի ձեռքբերում** /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում վճարել դրա համար:

1.2 Ապրանքը մատակարարվում է է սույն պայմանագրի N 1 և 2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր, գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեներով:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 **Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.8 Ձննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Առանձին փուլում թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրով նախատեսված կարգով, հաջորդ փուլում (փուլերում) լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ _____ (_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.1.2 Պայմանագրով նախատեսված Ապրանքի դիմաց վճարումները կիրականացվեն այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի մասին կողմերի միջև կկնքվի *լրացուցիչ համաձայնագիր* (կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված կարգով վերոհիշյալ համաձայնագրով կարող է նախատեսվել մինչև 20 տոկոս կանխավճար):

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված 3) և Ապրանքի ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը: Եթե Ապրանքի ձեռքբերման գործընթացում առկա են մի քանի միջնորդ կազմակերպություններ, ապա նախորդ միջնորդ կազմակերպությունների կողմից դրա ձեռքբերման կամ ներմուծման վերաբերյալ փաստաթուղթ չի ներկայացվում:

6.2 Արձանագրություն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ինչպես նաև ներկայացվում է սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված փաստաթղթերը: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) Հարցի կանոնավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով

փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված Ապրանքի ընդհանուր քանակի բաժանումը ըստ եռամսյակների կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով:

Սույն պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

****** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տվյալները).

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ հանդիսացող անձի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

3) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալառուի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ: Պատվիրատուն իր համաձայնությունը տալու համար իրավունք ունի մասնակցից պահանջելու նոր գործակալի կամ ենթակապալառուի վերաբերյալ փաստաթղթեր՝ վերջինիս համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեությանը ճշտելու նպատակով: Պատվիրատուի անհամաձայնության դեպքում վերջինս երկու աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է մասնակցին և գործակալի կամ ենթակապալառուի փոփոխություն չի կատարվում, կամ պայմանագիրը լուծվում է.

4) մասնակիցն է պատասխանատվություն կրում գործակալի կամ ենթակապալառուի պարտավորությունների համար:

9,5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

9.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Պայմանագիրը և հավելվածները կազմված են ____ էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.11. Սույն պայմանագրով նախատոսված Գնորդի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է **Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը**:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
---	---
ստորագրություն¤	ստորագրություն¤
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
՝_____՝ _____ 2014թ. կնքված
N ԵՔ-ՇՀԱՊՁԲ - 14/240 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1	Աղ	կգ	մանր կերակրի աղ	Կերակրի աղ՝ բարձր տեսակի, յոդացված ՀՍՏ 239-2005 Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս:
2	Ալյուր	կգ	Բարձր տեսակի ալյուր,	Ցորենի ալյուրին բնորոշ, առանց կողմնակի համի և հոտի: Առանց թթվության և դառնության, առանց փտահոտի ու բորբոսի: Խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 15 %-ից, մետաղամագնիսական խառնուրդները՝ ոչ ավելի 3,0%-ից, մոխրի զանգվածային մասը՝ չոր նյութի 0.55%, հում սոսնձանյութի քանակությունը՝ առնվազն 28,0%: ՀՍՏ 280-2007: Անվտանգությունը և մակնշումը N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
3	Մրգահյութ	լիտր	Պատրաստի օգտագործման բնական հյութ	Մրգահյութեր՝ պատրաստված խնձորի պտուղներից, պտղամսով, շաքարի օշարակի հավելումով կամ առանց դրա, արտաքին տեսքով պարզ՝ նստվածքի զանգվածային մասը 0,2% ոչ ավելի և ոչ պարզ՝ 0,8% ոչ պակաս, ԳՕՍՏ Ռ 52184-2003, ԳՕՍՏ Ռ 52185-2003 կամ ԳՕՍՏ Ռ 52186-2003: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 26-ի թիվ 744-Ն որոշմամբ հաստատված “Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի”, “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Փաթեթավորումը՝ ապակե տարայով:
4	Մրգահյութ	լիտր	Պատրաստի օգտագործման բնական հյութ	Մրգահյութեր՝ պատրաստված մասուրի պտուղներից, պտղամսով, շաքարի օշարակի հավելումով կամ առանց դրա, արտաքին տեսքով պարզ՝ նստվածքի զանգվածային մասը 0,2% ոչ ավելի և ոչ պարզ՝ 0,8% ոչ պակաս, ԳՕՍՏ Ռ 52184-2003, ԳՕՍՏ Ռ 52185-2003 կամ ԳՕՍՏ Ռ 52186-2003: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 26-ի թիվ 744-Ն որոշմամբ հաստատված “Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի”, “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Փաթեթավորումը՝ ապակե տարայով:
5	Բուսական յուղ /ձեթ/	լ	Արևածաղկի ձեթ՝ ռաֆինացված (զտված)	Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված, ԳՕՍՏ 1129-93: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
6	Բրինձ	կգ	Բրինձ	Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-ից մինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%, ԳՕՍՏ 6293-90: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված , Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի.
7	Բազուկ /հունիսի 1-ից հունվարի 1-ը/	կգ	Բազուկ	Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների: Արմատապտուղների չափերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 5-14սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 1%:
8	Բլղուր	կգ	Բլղուր	Ձավար ցորենի I, II և III տեսակի, ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր և առաջին տեսակի ցորենից, ԳՕՍՏ 276-60:Անվտանգությունը՝ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
9	Բուլկի	հատ		Դրոժով, բարձր տեսակի ալյուրից, 50գ բաժիններով: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
10	Գազար /հունիսի 1-ից հունվարի 1-ը/	կգ	Գազար	Սովարական և ընտիր տեսակի, ԳՕՍՏ 26767-85: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
11	Գարեձավար	կգ		Ստացված գարու թեփահանման հատիկների հղկմամբ կամ հետագա կոտրատմամբ, հատիկներով խոնավությունը 15 %-ից ոչ ավելի, փաթեթավորումը՝ 50կգ ոչ ավելի պարկերով: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգիե և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

12	Դդմիկ	կգ		Թարմ, առանց արտաքին վնասվածքների, տեղական արտադրության: ԳՕՍՏ 23670-79: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
13	Թխվածքաբլիթ	կգ		Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված, խոնավությունը՝3%-ից մինչև 10%, շաքարի զանգվածային պարունակությունը՝ 20% -ից մինչև 27%, յուղայնությունը՝ 3%-ից մինչև 30%: ԳՕՍՏ15810-96: Անվտանգությունը և մակնշումը N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
14	Թթվասեր	կգ	տեղական արտադրության	Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 0Т, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %
15	Իրիս	կգ		Կախված կոնֆետի տեսակից՝ խոնավության զանգվածային մասը՝ 4-25 %-ից ոչ ավել, փաթեթավորումը՝ ստվարաթղթի մեջ, չփաթաթված՝ հատավոր, կշռածրարված տուփերով, խառը տեսականիով: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդհոդվածի
16	Լոբի	կգ	Լոբի հատիկավոր	Լոբի գունավոր, միագույն, գունավոր ցայտուն, չոր՝ խոնավությունը 15 %-ից ոչ ավելի կամ միջին չորությամբ՝ (15,1-18,0) %: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 50 %
17	Լոլիկ	կգ	Լոլիկ	Լոլիկ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
18	Խնձոր	կգ	միջին չափի	Խնձոր թարմ, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 21122-75, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի»և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
19	Խտացրած կաթ	կգ	Խտացրած կաթ շաքարով	Խտացրած կաթ շաքարով, խոնավությունը՝ 26,5 %-ից ոչ ավելի, սախարոզը 43,5 %-ից ոչ պակաս, կաթնային չոր նյութերի զանգվածային մասը՝ 28,5 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 48 0Т-ից ոչ ավելի, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգիե և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
20	Ծաղկակաղամբ	կգ		Թարմ, սպիտակ, առանց արտաքին վնասվածքների, տեղական արտադրության: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
21	Կակաո	կգ		Խոնավությունը `6%-ից ոչ ավելի,pH`-ը 7,1-ից ոչ ավելի,դիսպերսությունը `90%-ից ոչ պակաս,փաթեթավորված թղթե տուփերում և մետաղյա կամ ապակյա բանկաներում,ինչպես նաև ոչ կծռաբաժանված,ԳՕՍՏ 108-76, Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին >> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
22	Կանաչի	կապ	Խառը	Կանաչի տարբեր տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և '«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
23	Կոնֆետեղեն	կգ	Կարամել	Կարամել կաթնային, պոմադային, մրգային, դոնդողային, դոնդողամրգային, նշակարկանդային, գրիլյաժային, պրալինե հավելանյութերով:Կախված կոնֆետի տեսակից խոնավության զանգվածային մասը՝ 4-25 %-ից ոչ ավել, ԳՕՍՏ 4570-93 կամ համարժեք, փաթեթավորումը՝ նրբաթիթեղի և թղթի մեջ, չփաթաթված՝ հատավոր, կշռածրարված տուփերով, խառը տեսականիով, ԳՕՍՏ 4570-93 կամ համարժեք:Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդհոդվածի
24	Կարագ	կգ	Կարագ սերուցքային	Սերուցքային, յուղայնությունը՝ 71.5-82.5%, բարձր որակի, թարմ վիչակում, պրոտեինի պարունակությունը 0.7գ, ածխաջուր 0.7գ, 740 կկալ 200-250գ կամ 20-25կգ գործարանային փաթեթներով, ԳՕՍՏ 37-91 կամ համարժեք:Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթի և կաթնամթերքի տեխնիկական կանոնակարգիե և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
25	Կաթնաշոռ	կգ	Կաթնաշոռ	Կաթնաշոռ 18 և 9,0% յուղի պարունակությամբ, թթվայնությունը՝ 210-240 °Т, փաթեթավորված սպառողական տարաներով, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

26	Կարտոֆիլ /հունիսի 1-ից հունվարի 1-ը/	կգ	միջին չափսի	I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, կլոր ձվաձև 4 սմ, 5%, երկարացված 3,5սմ, 5 %, կլոր ձվաձև (4-ից 5) սմ 20%, երկարացված (4-ից 4,5) սմ 20%, կլոր ձվաձև (5-ից 6սմ) 55%, երկարացված (5-ից 5,5) սմ 55%, կլոր ձվաձև (6-ից 7) սմ 20%, երկարացված (6-ից 6,5) սմ 20%: Տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ առանց չափածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգիե և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
27	Կաղամբ /հունիսի 1-ից հունվարի 1-ը/	կգ	Կաղամբ	(ԳOUS 26768-85) 55% -վաղահաս, 45%- միջահաս Արտաքին տեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չծլած, մաքուր, մեկ բուսաբանական տեսակի, առանց վնասվածքների: Գլուխները պետք է լինեն լիովին կազմավորված, ամուր, ոչ փխրուն և չլխկած: Գլուխների մաքրման աստիճանը՝ կաղամբի գլուխները մաքրված լինեն մինչև կանաչ և սպիտակ տերևների խիտ մակերեսը: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի: Մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, ցրտահարված գլուխների մթերումը չի թույլատրվում: Մաքրված գլուխների քաշը ոչ պակաս - 0.7 կգ
28	Կաթ	լ	Պաստերացված	Պաստերացված կովի կաթ 3 % յուղայնությամբ, թթվայնությունը՝ 16-210Т, ԳOUS 13277-79: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
29	Կիսել	կգ		Մրգային, թարմ, տուփերով, ԳOUS 18488-2000: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին« ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
30	Հավի միս	կգ	Հավի միս, բուդ, տեղական	Մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով, ԳOUS 25391-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
31	Հավի միս	կգ	Հավի կրծքամիս, պաղեցրած, տեղական	Մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով, ԳOUS 25391-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
32	Հավի ձու	հատ	01 կարգ	Ձու սեղանի կամ դիետիկ, 1-րդ կարգի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, դիետիկ ձվի պահման ժամկետը՝ 7 օր, սեղանի ձվինը՝ 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր, ՀUS 182-2012: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի «Ձվի և ձվամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասինե N 1438-Ն որոշմանը և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %
33	Հնդկաձավար	կգ	Հնդկաձավար	Հնդկաձավար I կամ II տեսակների, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 %-ից ոչ պակաս: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 70 %
34	Մակարոնեղեն	կգ	մակարոն, սովորական	Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ A (պինդ ցորենի ալյուրից), Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), B (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման, ԳOUS 875-92 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
35	Մածուն	կգ	Մածուն	Թարմ կովի կաթից, յուղայնությունը 3%-ից ոչ պակաս, թթվայնությունը 65-1000Т,: անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգիե և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
36	Շաքարավազ	կգ	Ճակնդեղից	Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել, ԳOUS 21-94 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը՝ մատակարարման պահին սահմանված ժամկետի 50%-ից ոչ պակաս
37	Շոկոլադ	կգ	Շոկոլադապատ կոնֆետներ	Ըստ սահմանված բնութագրի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի

38	Ոլոռ /պահածո/	բանկա		Պահածոյացված, կանաչ. տարայավորված 750գ -անոց տարայով: Տեղական կամ արտասահմանյան արտադրության: ԳՕՍ 15842-90: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին« ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
39	Ոլոռ	կգ	Ոլոռ	Չորացրած, կեղևած, դեղին կամ կանաչ գույնի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
40	Չամիչ	կգ		Գործարանային մշակման խաղողից առանց կորիզի , պահպանված 5 C-ից մինչև 25 C ջերմաստիճանում 70 %-ից ոչ ավելի խոնավության պայմաններում: ԳՕՍ 6882-88: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
41	Չոր միրգ	կգ		Գործարանային մշակման , պահպանված 5 C-ից մինչև 25 C ջերմաստիճանում 70 %-ից ոչ ավելի խոնավության պայմաններում: ԳՕՍ 28501-90: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:
42	Չորաբլիթ	կգ		Թարմ, քաղցր համով, բարձր տեսակի ալյուրից: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
43	Պանիր	կգ	Լոռի	Պանիր պինդ, կովի կաթից, աղաջրային, սպիտակից մինչև բաց դեղին գույնի, տարբեր մեծության և ձևի աչքերով: 46 % յուղայնությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%: ԳՕՍ 7616-85 կամ համարժեք: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջ-ների տեխնիկական կանոնակարգիե և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
44	Ջեմ	կգ	Ջեմ տեղական	Ջեմ՝ տարբեր մրգերի, 1-ին տեսակի ՀՍ 48-2007: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
45	Սխտոր	կգ		Թարմ, տեղական արտադրության, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղբանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
46	Սմբուկ	կգ	Սմբուկ	Սմբուկ թարմ, ԳՕՍ 13907-86: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
47	Սոխ	կգ	Սոխ	Թարմ, քաղցր, ընտիր տեսակի, նեղ մասի տրամագիծը 3 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍ 27166-86, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղբանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
48	Սպիտակաձավար	կգ		Պատրաստված կոշտ և փափուկ ցորենից, ԳՕՍ 7022-97: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված, «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգիե և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
49	Սիսեռ	կգ	կլոր սիսեռ	Սիսեռ ԳՕՍ 8758-76, համասեռ, մաքուր, չոր խոնավությունը՝ (14,0-20,0) % ոչ ավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
50	Վաֆլի	կգ		Միջուկով և առանց միջուկի, չափածրարված և առանց, ԳՕՍ 14031-68: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին« ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
51	Վարունգ	կգ	Վարունգ	Վարունգ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
52	Վիտամին C	կգ		ոչ գլյուկոզայացված: ԳՕՍ7047-55
53	Տանձ	կգ		Թարմ և քաղցր, հյութալի, տարբեր տեսակի, միջին չափսերի, առանց վնասվածքների: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
54	Տավարի միս	կգ	Տեղական, փափուկ	Միս տավարի պաղեցրած, փափուկ միս առանց ոսկորի, զարգացած մկաններով, պահված 0 oC -ից մինչև 4oC ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի, I պարարտության, պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, ոսկորի և մսի հարաբերակցությունը՝ համապատասխանաբար 0 % և 100 %, փաթեթավորումը՝ արկղերով, Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառա-վարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգիե և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: ՀՍ 342-2011:

55	Տոմատի մածուկ	կգ	Տոմատի մածուկ	Բարձր կամ առաջին տեսակի, ապակե կամ մետաղյա տարրաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ3 տարողությամբ, ԳՕՍՏ 3343-89: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
56	Ցորենաձավար	կգ	Ցորենաձավար	Ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր և առաջին տեսակի ցորենից, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված, «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգիե և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

ԳՆՈՐԴ

ստորագրություն¤
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

ստորագրություն¤
Կ.Տ

Հավելված N 3
՝_____՝ _____ 2014թ. կնքված
N ԵՔ-ՇՀԱՊՁԲ - 14/240 գնման պայմանագրի

Գնորդ	Վաճառող
_____	_____
_____	_____
_____	_____
հասցե_____	հասցե_____
հհ_____	հհ_____
_____	_____
հվհհ_____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» _____» 2____թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» _____ 2____թ

(Համաձայնագրի կնքման ամսաթիվը)

Պայմանագրի համարը՝ _____

Գնորդն, ի դեմս _____ և Մատակարարն՝ ի դեմս _____ _____, հիմք ընդունելով որ պայմանագրով (Համաձայնագրով) նախատեսված՝ ստորեվ նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ ապրանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագությունը հետևյալի մասին.

Պայմանագրի (Համաձայնագրի) շրջանակներում Վաճառողը «____» _____ 2____թ.-ից «____» _____ 2____թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները

Գնման առարկայի անվանումը	Մատակարարման քանակական ցուցանիշները	Մատակարարումների ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
ազգանուն, անուն _____	ազգանուն, անուն _____

Հավելված 2
«ԵՔ-ՇՀԱՊՁԲ-14/240» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գնման ժամանակացույց

ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՑԱՆԿ				Հ. 2 Մանկապարտեզ	Հ.3 Մանկապարտեզ	Հ.4 Մանկապարտեզ	Հ. 5 Մանկապարտեզ	Հ. 6 Մանկապարտեզ	Հ. 7 Մանկապարտեզ	Հ. 8 Մանկապարտեզ	Հ. 9 Մանկապարտեզ	Հ. 10 Մանկապարտեզ	Հ.11 Մանկապարտեզ	Հ.12 Մանկապարտեզ	Հ. 13 Մանկապարտեզ	Հ. 14 Մանկապարտեզ	Հ. 15 Մանկապարտեզ	Հ. 16 Մանկապարտեզ	Հ. 17 Մանկապարտեզ	Հ. 18 Մանկապարտեզ	Հ. 19 Մանկապարտեզ	Հ. 20 Մանկապարտեզ	Հ. 21 Մանկապարտեզ	Ընդամենը	մատակարարման ժամկետները
չ/հ	ապրանքախմբի անվանումը	չ/մ	ապրանքատեսակի նկարագիրը	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ			
1	Աղ	կգ	մանր կերակրի աղ	65	75	85	40	25	80	40	27	25	30	40	35	15	20	30	95	30	80	30		**867**	շաբաթական
2	Ալյուր	կգ	Բարձր տեսակի ալյուր,												30									**30**	շաբաթական
3	Մրգահյութ	լիտր	Պատրաստի օգտագործման բնական հյութ	100																				**100**	շաբաթական
4	Մրգահյութ	լիտր	Պատրաստի օգտագործման բնական հյութ	100									100											**200**	շաբաթական
5	Բուսական յուղ /ձեթ/	լ	Արևածաղկի ձեթ՝ ռաֆինացված (զտված)		20		20								20									**60**	շաբաթական
6	Բրինձ	կգ	Բրինձ										60		10									**70**	շաբաթական
7	Բազուկ /հունիսի 1-ից հունվարի 1-ը/	կգ	Բազուկ	80	120	60	30	30	90	80	58	100	25	50	75	15	75	30	189	35	130	30		**1302**	շաբաթական
8	Բլղուր	կգ	Բլղուր												30									**30**	շաբաթական
9	Բույկի	հատ														960								**960**	շաբաթական
10	Գազար /հունիսի 1-ից հունվարի 1-ը/	կգ	Գազար								90				30									**120**	շաբաթական
11	Գարեձավար	կգ									20													**20**	շաբաթական
12	Դդմիկ	կգ									20													**20**	շաբաթական
13	Թխվածքաբլիթ	կգ							50		20				60									**130**	շաբաթական
14	Թթվասեր	կգ	տեղական արտադրության												30									**30**	օրական
15	Իրիս	կգ																	60					**60**	շաբաթական
16	Լոբի	կգ	Լոբի հատիկավոր	40																	60			**100**	շաբաթական
17	Լոլիկ	կգ	Լոլիկ								20													**20**	շաբաթական
18	Խնձոր	կգ	միջին չափի			60	100				50			150	50									**410**	շաբաթական

Հ/հ	ապրանքախմբի անվանումը	Հ/մ	ապրանքատեսակի նկարագիրը	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ		Ծանկետները
19	Խտացրած կաթ	կգ	Խտացրած կաթ շաքարով		130	20									40									**190**	շաբաթական
20	Ծաղկակաղամբ	կգ													30									**30**	շաբաթական
21	Կակաո	կգ													5									**5**	շաբաթական
22	Կանաչի	կապ	Խառը				70		50	50	76													**246**	շաբաթական
23	Կոնֆետեղեն	կգ	Կարամել																60					**60**	շաբաթական
24	Կարագ	կգ	Կարագ սերուցքային	170	350	260	220	150	300	300	90	100	100	165	150	75	250	175	291	100	265	200	100	**3811**	շաբաթական
25	Կաթնաշոռ	կգ	Կաթնաշոռ								20				30									**50**	օրական
26	Կարտոֆիլ /հունիսի 1-ից հունվարի 1-ը/	կգ	միջին չափսի	1050	2000	1210	600	400	750	650	365	400	300	635	600		540	600	1760	300		600	420	**13180**	շաբաթական
27	Կաղամբ /հունիսի 1-ից հունվարի 1-ը/	կգ	Կաղամբ												50									**50**	շաբաթական
28	Կաթ	լ	Պաստերացված				200											100				300		**600**	օրական
29	Կիսել	կգ				30	20								30									**80**	շաբաթական
30	Հավի միս	կգ	Հավի միս, բուդ, տեղական				30																	**30**	շաբաթական
31	Հավի միս	կգ	Հավի կրծքամիս, պաղեցրած, տեղական										60	100	45				360					**565**	շաբաթական
32	Հավի ձու	հատ	01 կարգ	2000										500	1000			300				1500		**5300**	շաբաթական
33	Հնդկաձավար	կգ	Հնդկաձավար		120										35									**155**	շաբաթական
34	Մակարոնեղեն	կգ	մակարոն, սովորական	300	500	215	150	150	200	120	75	170	70	55	120	75	530	140	440	80	200	300		**3890**	շաբաթական
35	Մածուն	կգ	Մածուն								200		150		100						600	300		**1350**	օրական
36	Շաքարավազ	կգ	Ճակնդեղից		50																			**50**	շաբաթական
37	Շոկոլադ	կգ	Շոկոլադապատ կոնֆետներ																60					**60**	շաբաթական
38	Ոլոռ /պահածո/	բանկա													30									**30**	շաբաթական
39	Ոլոռ	կգ	Ոլոռ			30							25											**55**	շաբաթական
40	Չամիչ	կգ					10																	**10**	շաբաթական
41	Չոր միրգ	կգ					20																	**20**	շաբաթական
42	Չորաբլիթ	կգ							50						30									**80**	շաբաթական
43	Պանիր	կգ	Լոռի								10				45									**55**	շաբաթական
44	Ջեմ	կգ	Ջեմ տեղական		50		60																	**110**	շաբաթական
45	Սխտոր	կգ													5									**5**	շաբաթական
46	Սմբուկ	կգ	Սմբուկ				20				20													**40**	շաբաթական
47	Սոխ	կգ	Սոխ		30		20								20									**70**	շաբաթական

Չ/հ	ապրանքախմբի անվանումը	Չ/մ	ապրանքատեսակի նկարագիրը	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ	ՔԱՆԱԿԸ		Ծանկետները
48	Սպիտակաձավար	կգ													15									**15**	շաբաթական
49	Սիսեռ	կգ	կլոր սիսեռ												30									**30**	շաբաթական
50	Վաֆլի	կգ					40		50						60									**150**	շաբաթական
51	Վարունգ	կգ	Վարունգ								35													**35**	շաբաթական
52	Վիտամին C	կգ						0,2										0,6		0,4		0,4		**1,6**	շաբաթական
53	Տանձ	կգ					140				30													**170**	շաբաթական
54	Տավարի միս	կգ	Տեղական, փափուկ			100								100										**200**	շաբաթական
55	Տոմատի մածուկ	կգ	Տոմատի մածուկ	30	30							10	25		20						60			**175**	շաբաթական
56	Ցորենաձավար	կգ	Ցորենաձավար									20	20											**40**	շաբաթական

ԳՆՈՐԴ

ստորագրություն¤

ՎԱՃԱՌՈՂ

ստորագրություն¤